

ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ
 - 1.1. Սույն քաղաքականությունը սահմանում է շահաբաժինների չափի որոշման սկզբունքները և ընթացակարգը, ինչպես նաև շահաբաժինների վճարման ընթացակարգը:
 - 1.2. Շահաբաժինները բաշխվում են ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, Բանկի կանոնադրությամբ, ինչպես նաև սույն քաղաքականությամբ սահմանված ընթացակարգի համապատասխան:
2. Շահաբաժինների տեսակները և նվազագույն գումարը
 - 2.1. Բանկը կարող է հայտարարել և վճարել եռամսյակային, կիսամսյակային (այսուհետ՝ միջանկյալ) կամ տարեկան շահաբաժիններ:
 - 2.2. Բանկն իր բաժնետերերին վճարում է շահաբաժիններ՝ համապատասխան ժամանակահատվածի դրությամբ Բանկի շահույթի առնվազն 50 %-ի չափով: Բանկի խորհուրդը կամ բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող են սահմանել համապատասխանաբար միջանկյալ և տարեկան շահաբաժինների այլ չափեր:
3. Տարեկան շահաբաժիններ
 - 3.1. Տարեկան շահաբաժինների վճարման վերաբերյալ որոշումը ընդունվում է Բանկի տարեկան ընդհանուր ժողովի կողմից՝ Բանկի խորհրդի առաջարկության հիման վրա: Ընդհանուր ժողովը սահմանում է տարեկան շահաբաժինների չափը, ինչպես նաև դրանց վճարման կարգը և ժամկետները:
 - 3.2. Տարեկան շահաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահաբաժինների չափից: Եթե տարեկան շահաբաժինների հայտարարված չափը հավասար է արդեն վճարված միջանկյալ շահաբաժինների չափին, ապա տարեկան շահաբաժիններ չեն վճարվում: Եթե տարեկան շահաբաժինների հայտարարված չափը գերազանցում է արդեն վճարված միջանկյալ շահաբաժինների չափը, ապա տարեկան շահաբաժինները վճարվում են հայտարարված տարեկան շահաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահաբաժինների գումարի տարբերությամբ:
4. Միջանկյալ շահաբաժիններ
 - 4.1. Միջանկյալ շահաբաժինների վճարման վերաբերյալ որոշումը ընդունվում է Բանկի խորհրդի կողմից: Խորհուրդը սահմանում է միջանկյալ շահաբաժինների չափը, ինչպես նաև դրանց վճարման կարգը և ժամկետները:
 - 4.2. Միջանկյալ շահաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահաբաժնի 50 տոկոսը:
5. Շահաբաժինների վճարման սահմանափակումները
 - 5.1. Շահաբաժինների վճարումն արգելվում է, եթե Բանկի վնասները հավասար են կամ գերազանցում են Բանկի զուտ չբաշխված շահույթի գումարը: